ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

2024 ԹՎԱԿԱՆԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ»

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (այսուհետ՝ հանձնաժողով)

2023 թ. դեկտեմբերի 08-ին՝ ժամը 12:00–ին կայացած նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան՝	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան՝	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ (Հանձնաժողովի անդամ)
Արմենուհի Պետրոսյան՝		ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի անդամ)
Նարինե Հովհաննիսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի գլխավոր մասնագետ ժ/պ (Հանձնաժողովի անդամ)
Անուշ Մխիթարյան՝	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի անդամ)
Վերոնիկա Խորասանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության գլխավոր մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում
2. Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստի և քննարկում
3. Դրամաշնորհային մրցույթի մասին հրավերի տեքստի և հրավերին կից դրամաշնորհային ծրագրի կազմման տեխնիկական պայմանների քննարկում
4. Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկի ձևաչափի քննարկում
5. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում

1) Օրակարգի 1-ին հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է հանձնաժողովի առաջին նիստի օրակարգի հարցերը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվել է.

Հաստատել հանձնաժողովի առաջին նիստի օրակարգը:

Կողմ 5, դեմ 0

2) Օրակարգի 2-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվել է.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Կողմ 5, դեմ 0

3) Օրակարգի 3-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է դրամաշնորհային մրցույթի մասին հրավերի տեքստը և հրավերին կից դրամաշնորհային ծրագրի կազմման տեխնիկական պայմանները:

Օրակարգի 3-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվել է.

Հաստատել դրամաշնորհային մրցույթի մասին հրավերի տեքստը և հրավերին կից դրամաշնորհային ծրագրի կազմման տեխնիկական պայմանները (կցվում են):

Կողմ 5, դեմ 0

4) Օրակարգի 4-րդ հարց

Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է գնահատման թերթիկի ձևաչափը և գնահատման չափանիշները:

Օրակարգի 4-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվել է.

Հաստատել Դրամաշնորհային մրցույթի հայտերի գնահատման թերթիկի ձևաչափը (կցվում է):

Կողմ 5, դեմ 0

5) Օրակարգի 5-րդ հարց

Քննարկվել է Հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնելու օրը, վայրը և ժամը:

Օրակարգի 5-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օր սահմանել 2024 թվականի հունվարի 16-ը՝ ժամը 12:00, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 1-ին մասնաշենքի 6-րդ հարկի 605 սենյակում՝ հասցե՝ Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2:

Կողմ 5, դեմ 0

Արթուր Մարտիրոսյան

Զարա Ասլանյան

Արմենուհի Պետրոսյան

Նարինե Հովհաննիսյան

Անուշ Մխիթարյան

Վերոնիկա Խորասանյան